# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-18/11

ք. Երևան «28» փետրվարի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման փաստաթղթի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 44120400 (Քառասունչորս միլիոն հարյուր քսան հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն.

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող մարվել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պատասխանատու կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանում պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ [illegible]

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018497
ՀՎՀՀ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝
Գրիգորյան

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցու - 68
Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ ՓԲԸ Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն Ա. Աբրահամյան

Կ. Տ.

Հավելված N 1
«28» փետրվարի 2018 թ. կնքված
«ԱՍՀՆ ՍԱԾՁԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման ծառայությունների

2018 թվականի ընթացքում կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքների գծով նախատեսվում է իրականացնել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի, ներառյալ բազմաբաղադրիչ կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի վերաբերյալ հանրային իրազեկման ծրագրեր՝ հետևյալ ուղղություններով.

• <u>«114 թեժ գիծ» ծառայություն</u>

«114 թեժ գիծ» ծառայությունը (այսուհետ՝ թեժ գիծ) քաղաքացիներին կապահովի շարունակական խորհրդատվությամբ սոցիալական ապահովության ոլորտում, ներառյալ բազմաբաղադրիչ կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում, իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, այդ թվում՝

1) սոցիալական ոլորտի վերաբերյալ քաղաքացիների հեռախոսազանգերի (բողոքների) գրանցման համակարգի շարունակական գործարկում, քաղաքացիների հեռախոսազանգերի (բողոքների) ընդունում և համապատասխան ընթացքի ապահովում՝ ըստ անհրաժեշտության ապահովելով հետադարձ կապ,

2) Հաճախ տրվող հարցերի շտեմարանի շարունակական թարմացում՝ ըստ թեժ գիծ ծառայություն հարցադրումների. հաճախ տրվող հարցերի հիման վրա՝ համապատասխան իրազեկող նյութերի և հոդվածների տարածում ԶԼՄ-ների և տեղեկատվության տարածման էլեկտրոնային գործիքների միջոցներով:

3) 24/7 աշխատանքային ռեժիմի պահպանում՝ քաղաքացիների համար ստեղծելով հնարավորություն՝ իրենց հուզող հարցերը ներկայացնել նաև ոչ աշխատանքային ժամերին:

4) Ստացված հաղորդագրությունների վերծանում, մուտքագրում զանգերի գրանցման շտեմարան, հետադարձ կապի միջոցով քաղաքացիներին հուզող հարցերի վերաբերյալ պարզաբանումների տրամադրում:

5) թեժ գծի անխափան աշխատանքի ապահովում՝ տեխնիկական և ծրագրային շարունակական բարելավումների և պրոֆիլակտիկ միջոցառումների ձեռնարկման միջոցով:

6) Զանգերի քանակի և հարցերի հիմնական ուղղությունների վերաբերյալ ամսական հաշվետվությունների գեներացում զանգերի գրանցման էլեկտրոնային համակարգից, տվյալների վերլուծություն և հարցերի խմբավորում:

7) Թեժ գծին ստացված բողոքների և դրանցից յուրաքանչյուրին տրված ընթացքի վերաբերյալ առանձին հաշվետվությունների կազմում՝ ըստ ԱՍՀՆ ենթակառուցվածքների՝ ՍԱՊԾ, ԲՍՓՀ, ՄԾՏԳ, ԶՊԳ:

8) Ամսական հաշվետվությունների ներկայացում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ներառելով զանգերի քանակի և [illegible]

տեղեկություններ, ինչպես նաև առանձին՝ բողոքների և դրանցից յուրաքանչյուրին տրված ընթացքի մասին կազմվող էլեկտրոնային մատյանները:

Արդյունքում նախատեսվում է սպասարկել շուրջ 80 000 հեռախոսազանգ:

Հեռախոսազանգերի թիվը կանխատեսվել է՝ նախորդ տարվա միտումներից ելնելով:

• **www.ePension.am** **սոցիալական պորտալի վարում (համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի)**

Միասնական սոցիալական պորտալը կծառայի ամենօրյա թարմացվող տեղեկատվության տրամադրմանը, մասնավորապես՝ կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

1) Ըստ անհրաժեշտության՝ պորտալում տեղակայված (գործող)՝ կուտակային կենսաթոշակի, աշխատանքային կենսաթոշակի չափի, եկամտային հարկի, աշխատավարձի, սոցիալական վճարի հաշվիչների թարմացում՝ օրենսդրական փոփոխություններին համապատասխան,

2) Նոր հաշվիչների մշակում և տեղադրում՝ ըստ անհրաժեշտության,

3) Պորտալի բովանդակության շարունակական թարմացում, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականության, իրականացվող բարեփոխումների և դրանց հիմնավորումների, ֆինանսական գրագիտության և կուտակային բաղադրիչի թեմաներով այլ նոր նյութերի (վերլուծություններ, իրազեկման և ուսուցողական նյութեր, հոդվածներ, ներկայացումներ (պրեզենտացիաներ), տեսանյութեր և այլն) մշակում և տեղադրում պորտալում, տարածում սոցիալական ցանցերի միջոցով՝ կուտակային կենսաթոշակների վերաբերյալ նվազագույնը 20 նոր նյութի մշակում 2018թ. ընթացքում,

4) կուտակային բաղադրիչի մասնակիցների հասանելիության ապահովում անհատական կենսաթոշակային հաշիվների «Իմ հաշիվը» համակարգին Պորտալի միջոցով:

5) Երեխայի ծննդյան միանվագ նպաստի, մինչև 2տարեկան երեխայի խնամքի նպաստի, թաղման նպաստի առցանց դիմումի հասանելիության ապահովում Պորտալի միջոցով:

• **Հասարակայնության հետ կապեր (PR)**

Հիմնադրամի իրազեկման գործառույթների ապահովման նպատակով կնախագծվեն և կիրագործվեն հաղորդակցության և PR միջոցառումներ, այդ թվում՝

1) Կուտակային բաղադրիչի վերաբերյալ մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում՝ 2018թ. ընթացքում նվազագույնը 12 մամուլի հաղորդագրություն,

2) սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի, բաշխողական կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի վերաբերյալ սոցիալական ցանցերի միջոցով թիրախային լսարանին տեղեկացված պահելու նպատակով՝ Սոցիալական մեդիայի վարում (Facebook, Twitter, Linkedin, Youtube սոցիալական ցանցերում հիմնադրամի պաշտոնական էջերի շարունակական վարում), մասնավորապես՝

- Սոցիալական ցանցերում ակտիվ իրազեկում և կուտակային բաղադրիչի վերաբերյալ մշակված տեղեկատվական-իրազեկման նյութերի, հոդվածների, հաղորդումների և հոլովակների առաջխաղացում (promotion)՝ այդ թվում կիրառելով սոցիալական ցանցերում վճարովի առաջխաղացման եղանակներ (անհրաժեշտության դեպքում՝ ձեռք բերելով

- Առցանց սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացում սոցիալական ցանցերի հատուկ գործիքակազմի կիրառմամբ,

- Առցանց հանրային քննարկումների կազմակերպում հանրային մեծ հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ, բնակչությանը հուզող հարցերի պարզաբանում, ըստ անհրաժեշտության՝ կարծիքների և առաջարկների հավաքագրում և ներկայացում քաղաքականություն մշակողներին,

- Սոցիալական ցանցերում հետադարձ կապի ապահովում քաղաքացիների հետ, ստացված հարցումների և նամակների պատասխանում՝ ապահովելով առավելագույն սեղմ ժամկետներ (միջինը 5 րոպե՝ հարցումն ստանալուց հետո),

- Նոր օգտատերերի ներգրավում, Հիմնադրամի պաշտոնական էջերի հավանումների թվի և գրառումների ընդգրկվածության ավելացում՝ այդ թվում կիրառելով սոցիալական ցանցերում վճարովի առաջխաղացման եղանակները (անհրաժեշտության դեպքում՝ ձեռք բերելով ծառայություն ոչ ռեզիդենտից),

- Սոցիալական ցանցերում նոր թեմատիկ էջերի ստեղծում, ինչպես նաև գործող էջերի առաջխաղացում՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և դրա ենթակառուցվածքների պահանջի,

3) Կենսաթոշակային բլոգի ստեղծում և վարում, բլոգի միջոցով հանրամատչելի նյութերի, հոդվածների, վերլուծությունների, կենսաթոշակային հաշիվներին հետևելու վերաբերյալ տեղեկատվության տարածում:

4) Իրազեկում գործատուներին էլ. փոստի միջոցով՝

ա. խրախուսելով մասնավոր հատվածի գործատուների մոտ աշխատող՝ կուտակային բաղադրիչի մասնակիցների կողմից իրենց կենսաթոշակային հաշվի տարեկան հաշվետվությունները ստանալու նպատակով Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա անձնական էլ. փոստի հասցեները ներկայացնելը:

բ. Իրազեկելով կուտակային բաղադրիչի վերաբերյալ անվճար դասընթացների վերաբերյալ:

Նախատեսվում է էլեկտրոնային նամակների ուղարկում շուրջ 8000 գործատուի՝ 2 փուլերի միջոցով:

5) Բաց դռների օրերի անցկացում «Նորք» կենտրոնում, որոնց նպատակն է օժանդակել կուտակային բաղադրիչի մասնակիցներին՝ առցանց մուտք գործել իրենց անհատական կենսաթոշակային հաշիվներ և ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն՝ հաշվում արտացոլված տվյալների ընթերցման վերաբերյալ:

2018 թվականին կկազմակերպվի առնվազն 10 բաց դռների օր:

6) Կուտակային համակարգի վերաբերյալ տեղեկատվական թերթիկների տպագրություն՝ դասընթացների մասնակիցներին տրամադրելու նպատակով:

- <u>**Ուսումնական ծրագրեր**</u>

Կրթական և ուսումնական ծրագրերը նպատակ ունեն անվճար դասընթացների միջոցով կուտակային բաղադրիչի մասնակիցներին ներկայացնել նոր կենսաթոշակային համակարգը և դրա գործողության մեխանիզմներն ու սկզբունքները: 2018 թվականին նախատեսվում է. ըստ պահանջի և քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված հայտերի, [illegible] անվճար դասընթացներ և [illegible] [illegible]

Դասընթացներ և տարբեր ձևաչափով հանդիպումներ կիրականացվեն՝

ա. Կուտակային բաղադրիչի մասնակիցների համար՝ նրանց ներկայացնելով կուտակային բաղադրիչի գործողության մեխանիզմները, կենսաթոշակային հաշվի տարեկան հաշվետվությունների ընթերցման սկզբունքները, պատասխանելով նրանց հուզող հարցերին:

բ. 1964-1974թթ. ծնված վարձու աշխատողների համար՝ վերջիններին իրազեկելով կուտակային բաղադրիչին նախքան 2018թ. հուլիսի 1-ը կամավոր միանալու պարագայում տրվող արտոնության մասին:

- **Լրատվական ռեպորտաժների և հեռուստատեսային հաղորդումների պատրաստում**

Կուտակային կենսաթոշակային համակարգի լուսաբանման նպատակով կպատրաստվեն լրատվական ռեպորտաժներ և, ըստ անհրաժեշտության, տարբեր ձևաչափերով հաղորդումներ:

2018 թվականին կպատրաստվեն առնվազն 3 լրատվական ռեպորտաժներ, որոնց նպատակն է լինելու լուսաբանել կուտակային կենսաթոշակային համակարգին առնչվող արդիական հարցերն ու ընթացիկ նորությունները:

- **Կենսաթոշակային առցանց պարբերականի մշակում**

Պարբերականի նպատակն է լինելու մշակել լայն լսարանների համար նախատեսված տեղեկագիր, որի միջոցով առնվազն երկու ամիսը մեկ անգամ պարբերականությամբ կհրապարակվեն կուտակային կենսաթոշակային համակարգին առնչվող վերլուծություններ, հոդվածներ, հանրամատչելի նյութեր:

Պարբերականը կհրապարակվի առցանց՝ տարածվելով www.epension.am կայքի և սոցիալական ցանցերի միջոցով:

2018 թվականին նախատեսվում է մշակել և առցանց հրապարակել առնվազն 8 տեղեկագիր:

- **Նույնականացման քարտ կարդացող սարքերի բաշխում և խորհրդատվության տրամադրում քաղաքացիներին**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. հունվարի 16-ի 31-Ն, 2013թ. մայիսի 16-ի 517-Ն և 2013թ. հոկտեմբերի 23-ի 1152-Ն որոշումներով սահմանված կարգին համապատասխան՝ «Նորք» կենտրոնը 2018 թվականին կշարունակի իրավաբանական և ֆիզիկական անձանց նույնականացման քարտ կարդացող սարքերի և անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը:

Սույն փաստաթղթով նախատեսված՝ աշխատանքների մասին հանձնման-ընդունման ակտի հետ միասին, յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում ներկայացվելու է նաև իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն:

**Վերոնշյալ ծառայությունները մատուցվում են պայմանագրի կնքման պահից մինչև 25.12.2018թ.:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված N 2
«28» 02 2018թ. կնքված
ծառայությունների մատուցման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211340 | Էլեկտրոնային և տեղեկատվական ծառայություններ | | | 7636300 | 11296300 | 14956300 | 18616400 | 22276400 | 25936400 | 29596500 | 31437700 | 39278900 | 44120400 | **44120400** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| Հ/Հ ____________________ | Հ/Հ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| ՀՎՀՀ ____________________ | ՀՎՀՀ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «____________» 20 թ. կազմված՝ գնման հայտը ներկայացրած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը ըստ գնման ժամանակացույցի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | մատուցման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոնշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը համարվում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

**ԱԿՏ N**

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
(Պատվիրատուի անվանը) (Կատարողի անվանը)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ.                                   -ին կնքված N ________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի ծածկագիրը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ.                  -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ |
| ____ ազգանուն, անուն | ____ ազգանուն, անուն |
| ____ ստորագրություն | ____ ստորագրություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*22 սեպտեմբերի 2010 թվականի*
*թիվ 247-Ա, քաղաք Երևան*

## «ՆՈՐՔ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԵՆԱՇՆՈՐՀ ԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «Նորք» տեղեկատվական-վերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի մասնակցությամբ, 2010 թվականի սեպտեմբերի 22-ի դռնբաց նիստում քննարկեց Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) գրության հիման վրա Ընկերությանը մի շարք ապրանքային շուկաներում մենաշնորհ դիրք ունեցող համարելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովը պարզեց հետևյալը.

Հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 1-ի «Նորք» տեղեկատվական-վերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը գերիշխող դիրք ունեցող համարելու մասին» թիվ 55 Ա որոշմամբ Ընկերությունը «Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների մատուցման շրջանակներում հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձևավորում», «Սոցիալական աջակցության ծառայությունների մատուցման շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձևավորում», «Զբաղվածության ծառայությունների մատուցման շրջանակներում իրականացվող գործառույթների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «[illegible] [illegible] ձևավորում» ապրանքային շուկաներում 2004 թվականի [illegible] համարվել է գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից) և գրանցվել գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԱԳԿ /ԴԿ-1/ 3397-10 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն սոցիալական ապահովության բազաների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունները [illegible] Ընկերությունը [illegible] պայմանագրով 2004 թվականից սկսած [illegible] տարին մատուցում է [redacted]

[redacted] այդ թվում նաև տեղեկատվությունից հրաժարված քաղաքացիների բուժման վճարում, ապաստարկում և տեղեկատվության տրամադրում. ինքնաշխատ տեղեկատվական բազաներում կիրառվող քաղաքացիների սոցիալական պաշտպանության բարուների հասցեների հավաստիության ճշտման ու տվյալների փոփոխություն ապահովող համակարգի վարում, ապաստարկում և տեղեկատվության տրամադրում: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 146 539,7 հազար դրամ:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, ապաստարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում Ընկերությունը [illegible] պայմանագրով 2007 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է երեխաների ծննդյան միանվագ և մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստների տեղեկատվական համակարգի միջոցով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով նպաստ ստանալու համար սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալություններ դիմած անձանց, նրանց երեխաների հաշվառումը, նպաստի իրավունքի տրամադրումը, վճարման ցուցակների ապահովումը: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 9 454,9 հազար դրամ:

[redacted] հաստատություններում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» [redacted]տեղեկատվական համակարգի վարման, ապաստարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում Ընկերությունը [illegible] պայմանագրով 2006 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մանկատներում խնամվող երեխաների, որդեգրվածների և ծնողական խնամքից զրկված երեխաների անձնական տվյալների հաշվառում, որը ձևավորվում է մանկատների, ինչպես որդեգրողների դեպքում համապատասխան լիազորված մարմիններից, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններից ստացվող տեղեկատվության հիման վրա: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 15 234,7 հազար դրամ:

[redacted] Ընկերությունը [illegible] պայմանագրով 2006 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է [illegible] բանկում նախկին ԽՍՀՄ Խնայբանկի [illegible] հիմնադրամային բանկի ավանդատուների ավանդների փոխհատուցման

(այսուհետ՝ ավանդի փոխհատուցման) տեղեկատվական համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 357-Ն որոշմամբ սահմանված կարգով ավանդի փոխհատուցման համար սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ դիմած քաղաքացիների հաշվառումը, ավանդի փոխհատուցման իրավունքի, չափի, ինչպես նաև դրանց ապացուցելիության և վճարումից հետո տվյալների ամփոփումը: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների աշխատանքների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 14 634,7 հազար դրամ

[illegible] Ընկերությունը սույն պայմանագրով 2009 թվականին իրականացրել է տեղեկատվական համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգված համաձայնագրի կողմից սոցիալական ոլորտում բարեգործական դրական ծրագրերի և նրանց շահառուների հաշվառում, որոնց հիման վրա իրականացվում են վերլուծություններ, հաշվետվություններ, բարեգործական ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում, քաղաքացիների անհատական տվյալների մուտքագրում համակարգ, որոնք կիրառվում են ոլորտում քաղաքականության մշակման գործընթացում: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների աշխատանքների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 5 220,2 հազար դրամ:

[illegible] Ընկերությունը սույն պայմանագրով 2009 թվականին իրականացրել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչության գործունեության իրականացման համար ներքին անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, դրա հիման վրա հաշվետվություններ և վերլուծություններ, տեղեկատվական համակարգի ստեղծում, որի շահագործումը ամրագրված է աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվող գործողությունների արդյունավետ կազմակերպմանը: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 5 658,0 հազար դրամ:

Վերոնշյալ պայմանների աշխատանքների և ծառայությունների համար է մշտադիտարկման իրականացումը մեկ տեղեկատվական համակարգի կողմից կառավարելիությունն է ապահովել սոցիալական ոլորտում միասնական տեղեկատվական համակարգ, որը պատկանում է հանդիսանում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Յուրաքանչյուր դրա տեղեկատվական բազան նույնն է և կատարելագործվում է ընթացքում, կատարվող աշխատանքները զգալիորեն նպաստում են սոցիալական ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Համաձայնագրի կողմից իրականացված ուսումնասիրությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԱԳԳ /Ա-Գ.1/ 3397-10 գրության համաձայն [redacted]

Փաստորեն «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների գծով փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների գծով փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության

աշխատանքի ոլորտային տնտեսության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը.

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհի դիրք ունեցող, եթե որպես գնորդ (վաճառող) չունի մրցակից: Հետևաբար, [redacted]ղ:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կանոնակարգված ցանկում (ռեեստրում) գրանցվում, ինչպես նաև այդ դիրքը կորցնելու դեպքում՝ ցանկից հանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 6-րդ մասը, 19-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «թ» կետերը, Հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է

1. [redacted] սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

2. [redacted] համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

3. [redacted] տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը.

4. [redacted] 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և

տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ի ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման պրոցում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը.

[redacted] վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման պրոցում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

[redacted] տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման պրոցում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

7. [redacted] ընկերությանը «Սոցիալական աջակցության ծրագրերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Խնամքի հաստատություններում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» [redacted]

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Լույս» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

9. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել

դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՇԱՐՈՅԱՆ